«Արդշինբանկ» ՓԲԸ Խորհուրդը 2020 թվականի փետրվարի 12-ի թիվ 01/20-02 Լ որոշմամբ որոշել է՝

1. Վճարել միջանկյալ շահութաբաժիններ «Արդշինբանկ» ՓԲԸ «Α» դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց 2019 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակների համար, հաշվարկված համաձայն «Արդշինբանկ» ՓԲԸ կանոնադրության 9^{1}.3. կետի 1-ին ենթակետի:

2. Միջանկյալ շահութաբաժինները վճարել Բանկի «Α» դասի արտոնյալ բաժնետոմսեր ունեցող «Արդշինբանկ» ՓԲԸ այն բաժնետերերին, ովքեր ընդգրկվել են «Արդշինբանկ» ՓԲԸ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի ռեեստրում 2020 թվականի հունվարի 21-ի դրությամբ՝ ըստ «Արդշինբանկ» ՓԲԸ կանոնադրական կապիտալում նրանց մասնակցության համամասնության:

3. Միջանկյալ շահութաբաժինների վճարումն իրականացնել 2020 թվականի մարտի 16-ին համապատասխան գումարը «Արդշինբանկ» ՓԲԸ «Α» դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: